ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«11» փետրվարի 2025 թվական

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 11-Ի ՎԵՑԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԹԻՎ 2 ՆԻՍՏԻ

Նիստին մասնակցում են համայնքի ավագանու 15 անդամներից՝ Նորայր Սանթրոսյանը, Հայկ Վարդանյանը, Լուսինե Երիցյանը, Հուսիկ Գրիգորյանը, Գայանե Մելքումյանը, Կարինե Մարտիրոսյանը, Քյալո Հասոյանը, Մետաքսյա Մարգարյանը, Գրիշա Կոբալյանը, Աննա Մարտիրոսյանը:

Համայնքի ավագանու նիստն իրավազոր է, քանի որ նիստին մասնակցում են ավագանու անդամների կեսից ավելին:

Նիստը վարող՝ համայնքի ղեկավար Նորայր Սանթրոսյան:

Արձանագրող՝ Արմինե Պետրոսյան:

Համայնքի ավագանու նիստին մասնակցում են՝ Ձորաղբյուր գյուղի վարչական ղեկավար Կարեն Խաչատրյանը, Ջովք գյուղի վարչական ղեկավար Նորիկ Գևորգյանը, աշխատակազմի աշխատակիցներ, «Ջրվեժի համայնքային տնտեսություն» ՀՈԱԿ-ի տնօրեն Գրիշա Գևորգյանը:

Աշխատակազմի քարտուղար Արմինե Պետրոսյանը հրապարակեց, որ ավագանու անդամներ Գասպար Բաղդասարյանը, Գոռ Մարկոսյանը, Արկադի Գևորգյանը, Արթուր Պապանյանը և Վարսենիկ Բլեյանը տեղեկացրել են բացակայության մասին, այն է՝ աշխատանքի բերումով Գասպար Բաղդասարյանը, Գոռ Մարկոսյանը, Արկադի Գևորգյանը, Արթուր Պապանյանը գտնվում են հերթապահության մեջ, իսկ Վարսենիկ Բլեյանը հիվանդության պատճառով չեն կարող ներկայանալ նիստին:

Համայնքի ղեկավարը ներկայացրեց ավագանու նիստի օրակարգը.

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Օրակարգի նախագծի հաստատում:
2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքում գործող «ՁարՄան» զարգացման կենտրոնին դրամաշնորհ հատկացնելու մասին:
3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 27-ի N 151-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
4. Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:
5. Ջրվեժ համայնքի ավագանու հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին:

1. ԼՍԵՑԻՆ – ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ (Զեկուցող՝ ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ):

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի,

ՈՐՈՇՎԵՑ – 1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի ավագանու 2025 թվականի փետրվարի 11-ի՝ վեցերորդ նստաշրջանի հերթական թիվ 2 նիստի հետևյալ օրակարգը.

1) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքում գործող «ՁարՄան» զարգացման կենտրոնին դրամաշնորհ հատկացնելու մասին:

2) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 27-ի N 151-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

3) Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

4) Ջրվեժ համայնքի ավագանու հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 10
դեմ - 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն:

2. ԼՍԵՑԻՆ - ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ «ԶԱՐՄԱՆ» ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Զեկուցող՝ ՍՈՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ)

ԶԵԿՈՒՑԵՑ – ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Սոնա Հովհաննիսյանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ – Համայնքի ավագանու անդամ Գայանե Մելքումյանը:

Հարցի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց համայնքի ղեկավար Նորայր Սանթրոսյանը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի, 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի և Ջրվեժ համայնքի ավագանու 2024 թվականի հուլիսի 11-ի թիվ 79-Ա որոշման 1-ին կետի պահանջներով, հաշվի առնելով Մանկական զարգացման հիմադրամի տնօրեն Լուսինե Սիմոնյանի 2025 թվականի հունվարի 31-ի թիվ Ե-16/2025 գրությունը՝ Ջրվեժ համայնքում ըստ գնահատված սոցիալական կարիքների՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված մինչև 18 տարեկան երեխաների մասնագիտական և ցերեկային խնամքի ծառայությունների մատուցման համար «ԶարՄան» զարգացման կենտրոնի ծրագրի գործունեության շարունակականությունն ապահովելու վերաբերյալ, ինչպես նաև կարևորելով սոցիալական ծրագրերի իրականացման անհրաժեշտությունը,

ՈՐՈՇՎԵՑ – 1.Թույլատրել համայնքի ղեկավարին՝ իրականացնելու ծախսեր բյուջեի «Կրթություն» ծրագրի «Այլ ընթացիկ դրամաշնորհներ» հոդվածից և Մանկական զարգացման հիմնադրամին հատկացնել 3 700 000 (երեք միլիոն յոթ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ գումար՝ Մանկական զարգացման հիմնադրամի կողմից «ԶարՄան» զարգացման կենտրոնի 2025 թվականի համար ընթացիկ պահպանման ծախսերի իրականացման նպատակով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 10
դեմ - 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն:

3. ԼՍԵՑԻՆ - ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 151-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Զեկուցող՝ ՍՈՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ)

ԶԵԿՈՒՑԵՑ – ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Սոնա Հովհաննիսյանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ – Համայնքի ավագանու անդամ Հայկ Վարդանյանը:

Հարցի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց համայնքի ղեկավար Նորայր Սանթրոսյանը:

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» 33-րդ հոդվածի 1-ին մասով, 34-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 32-րդ հոդվածի 5-րդ մասով,

ՈՐՈՇՎԵՑ – 1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի 2025 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 151-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել՝ հետևյալ փոփոխությունները.

1)որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի «բ» պարբերությունում «2,541,374.9» թիվը փոխարինել «2,769,751.1» թվով. «գ» պարբերությունում՝ «1,642,006.9» թիվը փոխարինել «1,870,383.1» թվով.

2)որոշմամբ հաստատված NN 2-6 հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ, համաձայն NN 1-5 հավելվածների:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 10
դեմ - 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն:

4. ԼՍԵՑԻՆ – ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Զեկուցող՝ ՀՈՒՍԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ)

ԶԵԿՈՒՅՑԵՑ – աշխատակազմի գլխավոր մասնագետ Հուսիկ Գրիգորյանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ – Համայնքի ավագանու անդամ Քյալո Հասոյանը:

Հարցի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց համայնքի ղեկավար Նորայր Սանթրոսյանը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 14^3-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի 2025 թվականի հունվարի 14-ի թիվ 2/փ-12 դրական եզրակացությունը,

ՈՐՈՇՎԵՑ – 1. Հավանության տալ Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղում գտնվող՝ համայնքային սեփականության հանդիսացող, 07–057–0357–0120 կադաստրային համարի 0,005 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքի նպատակային նշանակությունը էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների՝ էներգետիկայի հողերի կատեգորիա փոխադրելուն:

2.Առաջարկել համայնքի ղեկավարին՝ հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը օրենքով սահմանված կարգով պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի հողային ֆոնդի տարեկան ընթացիկ հաշվառման տվյալներում և համայնքի հողային հաշվեկշռում:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 10
դեմ - 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն:

5. ԼՍԵՑԻՆ – ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Զեկուցող՝ ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ):

ԶԵԿՈՒՅՑԵՑ – Համայնքի ղեկավար Նորայր Սանթրոսյանը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջով,

ՈՐՈՇՎԵՑ – 1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի ավագանու վեցերորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օր և ժամ սահմանել 2025 թվականի մարտի 11-ը, ժամը 17:00-ն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 10
դեմ - 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն:

ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ
ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ԼՈՒՍԻՆԵ ԵՐԻՑՅԱՆ
ԳԱՅԱՆԵ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ
ՀՈՒՍԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ԿԱՐԻՆԵ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
ՔՅԱԼՈ ՀԱՍՈՅԱՆ
ՄԵՏԱՔՍՅԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ
ԳՐԻՇԱ ԿՈԲԱԼՅԱՆ
ԱՆՆԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ *Ն.ՍԱՆԹՐՈՍՅԱՆ*

Արձանագրող՝ *Ա.Պետրոսյան*